

հայրն, բայց ինչ նշանակութիւն ունի այդ բոլորը, քանի որ հարցը հայ բանաստեղծի մասին է, իսկ մեզ վաղուց յայտնի է, որ մեր բանաստեղծներից տասից իննի համար՝ ինչպէս ուսմանն ասում են՝ ոչ մի օրէնք չէ գրուած:

Տ. Յ.

Գ. Ե. «ԱՆԴՈՐԾ ԿԱՆԱՅԲ». «ԱՁԽԷՆ». 68 էր. գ. 10 կ. Բաղու, 1903 թ.

«Աշխէն»ը մի վէպիկ է պոլսահայերի կեանքից: Վէպիկի հերոսուհին «անգործ կանանցից» մէկն է: Ի բնէ նա լաւ յատկութիւններով է օժտուած, բայց կեանքի պայմանները և զբոսաւարտութիւնը անգործութիւնը անբարոյականացնում են նրան և խորտակում նրա բազմը և նոյնիսկ կեանքը:

Իսկապէս ասած, այն ենթագրութիւնը, թէ անգործութիւնը նրան է եղել Աշխէնի անբարոյականացման գլխաւոր պատճառը, մենք անում ենք՝ հիմնուելով վէպիկի «Անգործ կանայք» ընդհանուր վերնագրի վրայ: Ինչ վերաբերում է վէպիկի բովանդակութեանը, նա այնքան հակասական կէտեր է պարունակում իր մէջ, որ ընթերցանութիւնից յետոյ չէ որոշուում այն հարցը, թէ ինչ է ուզում ասել հեղինակը իր գրուածքով: Վէպիկի հերոսուհու, Աշխէնի պատկերը վերաբարձրուած է անորոշ և խառն կերպով, այնպէս՝ ինչպէս դուրս են գալիս լուսանկարները, երբ մարդ շարժւում է լուսանկարուելու բոլորէին: Փոփոխութիւններ կան նաեւ իր հրակայութեան մէջ շարժւում և խառնուում են օրիորդ Աշխէնի համակրելի գծերը, երբ ես կարգում եմ, որ նա մեռել է «աննհրեղի մի հիւանդութիւնից»:

Բաւական էր, որ Դիւման իր հերոսուհուն մեռցնէր ոչ թէ թոքախտից, այլ «աննհրեղի մի հիւանդութիւնից», որպէսզի «կամեղիազարդ տիկինը» կորցնէր իր ամբողջ հրապոյրը և նոյնիսկ իմաստը:

Վէպիկի միւս տիպերն էլ դժգոյն են և անորոշ:

Վէպիկը գրուած է կոկ ու կանոնաւոր լեզուով: Ճիշտ է, պատահում են երբեմն այսպիսի նախադասութիւններ՝ «Այս հագած, շորերը մի քանի բառեր սովորած և ունեցած համբաւի մասին մի մտածիլ լաւատեսի նման», բայց այդ պէտք է վերադրել սրբազորողի անհոգութեանը:

Տ. Յ.